Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ – 2023

9–րդ դասարան - 120 բոպե

N 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 x 4 = 2 միավոր)

1. **Սերմնացանի առակում ո՞ւմ է խորհրդանշում *<u>սերմնացանը</u>*.** *(0,5 միավոր)*

   1) անմեղ մարդկանց
   2) Հիսուս Քրիստոսին
   3) Հայր Աստծուն
   4) մեղավոր մարդկանց

2. **Ո՞ր դարում են կաթոլիկ եկեղեցու դեմ բողոքի շարժում սկսել Գերմանիայի, Շվեյցարիայի և Անգլիայի տեղական եկեղեցիները.** *(0,5 միավոր)*

   1) XVI
   2) XIV
   3) XVIII
   4) XIX

3. **Ի՞նչ է նշանակում *<u>սունկի</u>* բառն արաբերեն.** *(0,5 միավոր)*

   1) գիտելիք
   2) քաղաք
   3) գործելակերպ
   4) խումբ

4. **Ո՞վ էր 1877-1878 թթ. Զեյթունի ապստամբության ղեկավարը.** *(0,5 միավոր)*

   1) Ներսես եպիսկոպոսը
   2) Նիկողայոս եպիսկոպոսը
   3) Բարդուղիմեոս վարդապետը
   4) Վարդան վարդապետը

N 5-9

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

(1 x 5 = 5 միավոր)

5. Հովսեփն ու Մարիամը մարդահամարին մասնակցելու նպատակով մեկնում են Հովսեփի ծննդավայրը՝ _____: *(1 միավոր)*

6. Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայոց Եկեղեցին տոնում է տարին _____ անգամ: *(1 միավոր)*

7. Քրիստոսի աշակերտները _____ տարի շրջել են Հիսուսի հետ, հավատարմորեն հետևել իրենց ուսուցչի պատվիրաններին: *(1 միավոր)*

8. Գանձասարի վանքի մասին առաջին տեղեկությունը հայտնել է _____ կաթողիկոսը: *(1 միավոր)*

9. _____ առաջին կաթողիկոսն էր, ով սկսում է կոչվել թվահամարով: *(1 միավոր)*

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

(1 x 2 = 2 միավոր)

10. Վանքի անունը համապատասխանեցնել գտնվելու գավառին. *(1 միավոր)*

1. Նարեկավանք
2. Հնձուց վանք
3. Հոռոմոսի վանք
4. Ցախաց քար վանք

1	
2	
3	
4	

ա. Վայոց ձոր
բ. Շիրակ
գ. Արշարունիք
դ. Ռշտունիք
ե. Կարին

11. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին: *(1 միավոր)*

1. Հայոց եկեղեցական կանոնադրությունը դադարում է գործել:
2. Հիմնադրվում է Սկյուտարի ճեմարանը:
3. Պետական խորհրդի որոշմամբ հայկական ծխական բոլոր դպրոցները դրվում են լուսավորության նախարարության տնօրինության ներքո:
4. Կազմվում է «Գավառահայ հարստահարությունների բողոքագիրքը»:

ա. 1838 թ.
բ. 1897 թ.
գ. 1917 թ.
դ. 1872 թ.
ե. 1905 թ

1	
2	
3	
4	

N12-13
Աշխատանք սկզբնաղբյուրով
(1 x 4 = 4 միավոր)

12. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. ***(2 միավոր)***

« …. Բազմաթիվ վարդապետների մոտ ուսանելով՝ ստացավ վարդապետական աստիճան, բայց, դրանով չբավարարվելով, գնաց Կիլիկիա՝ Սև լեռ կոչված վանքը, որտեղ բազմաթիվ ուսուցիչներ ու վարդապետներ էին ապրում . . . . »:

1. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ մասին է գրել հեղինակը: *(1 միավոր)*

_____

13. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. ***(2 միավոր)***

«…. աստվածավախ, Աստծու պատվիրանների հանդեպ ավանդապահ, մարդասեր, սուրբ, սթափ հայրապետ էր … նրա նման ուրիշ մեկը երբեք չեղավ Հայոց աշխարհում»:

1. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ր հայրապետին է բնութագրում հեղինակը: *(1 միավոր)*

_____

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: *(0,5 միավոր)*

Արամազդ, Արես, Խալդի, Զևս, Ահուրամազդա

---

14. 2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդ: *(0,5 միավոր)*

Գրիգոր Բ., Խաչիկ Բ., Գրիգոր Դ., Ներսես Դ.,

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. *(1 միավոր)*

ա. Ավետում, Ս. Սարգիս, Երևման Ս. Խաչ, Վերափոխում, Վարդավառ
բ. Վարագա Ս. Խաչ, Վերափոխում, Տյառնընդառաջ, Ս. Հարություն, Ս. Վարդանանց
գ. Գյուտ Խաչ, Համբարձում, Կաթուղիկե Ս. Էջմիածին, Ծաղկազարդ, Խաչվերաց

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. *(1 միավոր)*

ա. Անդրեաս, Հովհաննես, Բարաբբա, Հակոբոս, Պետրոս
բ. Թադեոս, Հուդա, Սիմոն, Թովմաս, Մատթեոս
գ. Ղուկիանոս, Փիլիպպոս, Հակոբոս, Պետրոս, Հովհաննես

---

16. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: *(1 x 2 = 2 միավոր)*

1) Հայոց Եկեղեցու առաջնորդներն անհանդուրժողական վերաբերմունք ունեին Կիլիկյան Հայաստանում գտնվող ասորական, հունական և հռոմեական եկեղեցիների նկատմամբ:
2) Թովմա Մեծոփեցին վարդապետական աստիճան էր ստացել անձամբ Հովհաննես Հերմոնեցուց:
3) Ամբերդի եպիսկոպոսությունը հիմք է հանդիսացել Արագածոտնի թեմի համար:
4) Գագիկ I-ի հիմնադրած Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարը VII դարում կառուցված Ս. Հռիփսիմեի կրկնօրինակն էր:
5) Գլաձորի համալսարանը միջնադարում հայտնի է եղել իբրև §Երկրորդ Աթենք», §մայրաքաղաք իմաստունների» և այլն:

17. Շարադրանք

(4 X 0,5 = 2 միավոր)

Ներկայացրեք Հայոց Եկեղեցու չորս պարտադիր խորհուրդները։

Ս. Մկրտություն

Ս. Դրոշմ

Ապաշխարություն

Ս. Հաղորդություն